4
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2021

Luys Lnyu®

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ «ՆԱԽ՝ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ» ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ «ՆԱԽ՝ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ» ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կոչ է անում Հայաստանում գտնվող իր քաղաքացիներին «զգոն լինել և զգուշություն ցուցաբերել հայ-ադրբեջանական սահմանի որոշ հատվածներում լարվածության սրացման և վերջին բախումների պատճառով... ինչպես նաև խուսափել շփման գծին և սահմանին մոտ ճանապարհորդություններից...»:

Հայտարարությունն արվեց սեպտեմբերի 25-ին՝ Արցախյան պատերազմը սկսվելուց երկու օր առաջ: Նման հայտարարություններ սովորաբար լինում են այն ժամանակ, երբ սահմանին նկատվում է ծայրահեղ լարված իրավիճակ, արձանագրվում են լուրջ փոխհրաձգություններ և մարդկային կորուստներ: Չնայած տավուշյան դեպքերն ավելի վաղ էին տեղի ունեցել, այդ հայտարարությունը, սակայն, արվեց այդ ժամանակվա հրաձգությունից մի քանի օր հետո: Ուստի, փորձագետների շրջանում կարծիքներ էին հնչում, որ Միացյալ Նահանգները կարող էր զորքերի տեղաշարժից կամ այլ տեղեկություններից եզրակացնել, թե կա առաջիկա ռազմական գործողությունների վտանգ:

Պետք է նշել, որ գրեթե քառորդ դար Միացյալ Նահանգները մեծ ներդրում է ունեցել Հարավային Կովկասի տարածաշրջանում կայունության և խաղաղության ապահովման գործում, խթանել է տարածաշրջանային երկրներում արդյունավետ կառավարումն ու ժողովրդավարությունը, աջակցել եվրաատլանտյան կառույցներին այդ երկրների ինտեգրման գործընթացին: Միացյալ Նահանգներում բնակվող հայկական մեծաթիվ սփյուռքը, տարածաշրջանային էներգետիկ նախագծերը, ինչպես նաև Վրաստանի հետ ընդլայնվող քաղաքական կապերը պատճառ են դարձել, որ Միացյալ Նահանգներն ակտիվ ներգրավվածություն ունենա տարածաշրջանում:

Ի սկզբանե Վաշինգտոնը ներգրավվել է նաև Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում՝ որպես Մինսկի խմբի համանախագահ (Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ միասին): 2001թ. ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը

Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին հրավիրում է Ֆլորիդա՝ Քի Ուեսթ, ԱՄՆ միջնորդությամբ կազմակերպված հանդիպմանը մասնակցելու համար, որը թվում էր՝ առաջարկելու է հակամարտության լուծման տարբերակ: Սակայն բանակցությունների արդյունքում չհաջողվեց ձեռք բերել համաձայնություն, և հունիս ամսին Ժնևում պլանավորված բանակցությունների վճռական փուլը չեղարկվեց: Հետադարձ հայացք նետելով բանակցություններին՝ ամերիկացի համանախագահ Ռուդոլֆ Պերինան նշում էր, որ կողմերն այդ պահին «անհավատալիորեն մոտ» էին հակամարտության լուծմանը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերսկսումը ցույց տվեց, որ Միացյալ Նահանգներն ունի *կարևոր, սակայն ոչ կենսական շահեր* տարածաշրջանում: Ոչ ակտիվ ներգրավվածությունը պայմանավորված էր նաև Թրամփի «America First» դիվանագիտությամբ, որի համաձայն Միացյալ Նահանգների շահերը լավագույնս կարող են սպասարկվել մեկուսացման քաղաքականության և, որպես դրա հետևանք, իր սահմաններից դուրս տարածաշրջանային առճակատումներում ոչ նշանակալի ներգրավվածության արդյունքում: Ի տարբերություն նախորդ վարչակազմերի՝ Թրամփի վարչակազմն ավելի պասիվ դիրքորոշում էր որդեգրել մի շարք միջազգային հարցերի, մասնավորապես՝ Ռուսաստանի ազդեցության ոլորտում գտնվող հարցերի առնչությամբ: Միացյալ Նահանգների հետաքրքրվածության նվազումն առաջին անգամ դրսևորվեց 2017թ. օգոստոս ամսին, երբ երկիրը նշանակեց Մինսկի խմբի իր ներկայացուցչին, սակայն նրան չշնորհեց դեսպանի կարգավիճակ՝ ի տարբերություն իր ֆրանսիացի և ռուս գործընկերների:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների վերսկսումից հետո, Վաշինգտոնը վերջին խոշոր միջազգային դերակատարն էր, որը տարածեց հայտարարություն դեպքերի վերաբերյալ: Սպասվող նախագահական ընտրությունները, COVID-19-ի համավարակի սրացումը և նախագահ Թրամփի մոտ COVID-19-ի ախտորոշումը զգալիորեն շեղեցին Նահանգների ուշադրությունն աշխարհում տեղի ունեցող մնացած իրադարձություններից: Ի տարբերություն մյուս երկու համանախագահ երկրների առաջնորդների՝ Թրամփն անձնապես չներգրավվեց հակամարտության կարգավորման գործում: Միակ հեռախոսազրույցը եղել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և նախագահ Թրամփի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Օ'Բրայենի միջև, որը տեղի ունեցավ պատերազմի 5-րդ օրը: Հետագայում, «New York Times»-ին տված իր հարցազրույցում Հայաստանի վարչապետն ասել է, որ Օ'Բրայենը խոստացել է հեռախոսազրույց կազմակերպել նրա և նախագահ Թրամփի միջև: Սակայն հեռախոսազրույցը հետաձգվեց, երբ նախագահ Թրամփին ախտորոշվեց COVID-19-ի վարակ: Ավելին, երբ Սպիտակ

տանը տեղի ունեցած ասուլիսի ընթացքում Թրամփին հարց ուղղվեց հակամարտության մասին, տպավորություն ստեղծվեց, որ նա միայն աղոտ պատկերացում ունի Հարավային Կովկասի մասին. «Մենք ուշադիր հետևում ենք դրան (*Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին*): Մենք լավ հարաբերություններ ունենք այդ տարածաշրջանում: Տեսնենք՝ կկարողանանք դա դադարեցնել».- ասել էր Թրամփը:

Սկզբնական փուլում Վաշինգտոնի կողմից բարձր մակարդակի դիվանագիտական ներգրավվածությունը բավական սահմանափակ էր: Սակայն, սահմանին աճող լարվածության, Միացյալ Նահանգների հայկական համայնքի կողմից խիստ դատապարտման և երրորդ կողմերի ակտիվ ներգրավվածության պայմաններում Նահանգների պատասխանը դարձավ ավելի «հաստատակամ»: Միացյալ Նահանգներն իր հայտարարությունների զգալի մասում կողմերին կոչ էր անում ձեռնամուխ լինել ռազմական գործողությունների դադարեցմանը և խստորեն դատապարտում էր արտաքին դերակատարների միջամտությունը: Սեպտեմբերի 27-ին ԱՄՆ պետքարտուղարի մամլո խոսնակ Մորգան Օրտագուսը նշում էր. «Միացյալ Նահանգները կարծում է, որ աճող բռնության պայմաններում արտաքին դերակատարների մասնակցությունը լիովին անօգուտ է և միայն սրում է տարածաշրջանային լարվածությունը»: Իսկ ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն «Fox News»-ին տված հարցազրույցում կոչ էր անում չխրախուսել հակամարտության միջազգայնացնումը և նշում էր, որ «կողմնակի դերակատարները չպետք է խառնվեն, քանզի երրորդ կողմերի՝ այլ երկրների, միջամտությունը միայն խորացնում է խնդիրը»:

Հոկտեմբերի 15-ին, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, Պոմպեոն նշում էր. «Թուրքերը խառնվել են և միջոցներ են տրամադրել Ադրբեջանին՝ մեծացնելով ռիսկի գործոնը Լեռնային Ղարաբաղ կոչվող այս տարածքի համար պատմական պայքարում... Մենք լիահույս ենք, որ հայերը կկարողանան պաշտպանվել այն ամենից, ինչ անում են ադրբեջանցիները...»:

Ավելի վաղ՝ հոկտեմբերի 1-ին, ԱՄՆ կոնգրեսականները ներկայացրել էին երկկուսակցական բանաձև (1165 բանաձևը), որով դատապարտում էին Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի դեմ բռնության սանձազերծման համար և կոչ էին անում Թուրքիային չմիջամտել հակամարտությանը: Բանաձևը ներկայացրել էին Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հայկական հարցերով հանձնախմբի երկկուսակցական անդամները, որոնց թվում էին Ջեքի Սփիլրը, Ադամ Շիֆը, Ֆրանկ Փալոնը, Գուս Բիլիրակիսը և 32 այլ անդամներ:

Միացյալ Նահանգների դիրքորոշումն ակտիվ ներկայացնում էին Ազգային անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական Ռոբերտ Օ'Բրայենը և պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանը, ովքեր հակամարտության տարբեր

փուլերում երկխոսություններ էին ծավալել հայ և ադրբեջանցի պաշտոնյաների հետ: Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ հոկտեմբերի 23-ին Վաշինգտոնում անցկացված հանդիպումներից հետո Ազգային անվտանգության հարցերով խորհրդականը հայտարարել էր, որ մերժում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական լուծումը, և որ «Միացյալ Նահանգները կշարունակի գործադրել ակտիվ դիվանագիտական ջանքեր բոլոր մակարդակներում, քանի դեռ հակամարտությունը չի լուծվել»: Օ'Բրայենը ընդգծում էր նաև, որ զրույցի ընթացքում կողմերին կոչ է արել անհապաղ հաստատել հրադադար, այնուհետև վերադառնալ Մինսկի խմբի միջնորդությամբ ընթացող բանակցությունների սեղան, իսկ արտաքին դերակատարներին հորդորել է չմիջամտել, քանզի դա ավելի է ապակայունացնում իրավիճակը:

Ավելի ուշ, ազգային անվտանգության հարցերով խորհրդականը հադես եկավ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում սկանդինավյան խաղաղապահներ տեղակայելու առաջարկությամբ: Ըստ նրա՝ հակամարտության գոտում գտնվող խաղաղապահ ուժերի շարքում չպետք է ներառվեն Մինսկի խմբի համանախագահող երկրներ և հարևան երկրների ներկայացուցիչներ: «Թուրքական միջնորդության կամ խաղաղապահության որևէ ձև Միացյալ Նահանգների, ինչպես նաև Հայաստանի համար հակված է ձախողման…», նշում էր Օ'Բրայենը Լոս Անջելեսում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Այդուհանդերձ, գաղափարը մեծ աջակցություն չստացավ և առավելապես ընկալվեց որպես անիրատեսական: Հատկանշական է, որ այն հարցին, թե արդյո՞ք ռուսական կողմը տեղյակ է այդ գաղափարի մասին, ՌԴ փոխարտգործնախարար Անդրեյ Ռուդենկոն լրագրողներին պատասխանել էր, որ «ամերիկացիներին պետք է հարցնել, թե որտեղից են նրանք ստացել այդ առաջարկներն ու գաղափարները: Պոտենցիալ մեխանիզմների բոլոր կարևոր պարամետրերը պետք է համակարգել հակամարտող կողմերի հետ խորհրդակցությունների ժամանակ»: Իր հերթին, ՀՀ վարչապետի խորհրդական Վաղարշակ Հարությունյանը նշում էր, որ «առանցքային խնդիրը խաղաղապահ ուժերի կազմն ու ձևաչափն է, քանզի տարբեր երկրների շահերն իրացվելու են այդ ուժերի միջոցով»: Նա նաև հիշեցրեց, որ 1994թ. Ադրբեջանը մերժեց ռուս խաղաղապահների տեղակայման գաղափարը, այն դեպքում, երբ Հայաստանը կողմ էր այդ ծրագրին, և նշեց, որ որ պատմությունը կրկնվում է:

Միացյալ Նահանգների ներգրավվածությունն ինստիտուցիոնալ մակարդակում

Միացյալ Նահանգների ներգրավվածությունը շատ ավելի մեծ էր ինստիտուցիոնալ մակարդակում՝ որպես համանախագահ ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմում, որը, հավանաբար, շարունակում է մնալ ԱՄՆ-Ռուսաստան

համագործակցության բացառիկ պլատֆորմներից մեկը՝ չնայած առկա հակասություններին:

Առաջին համատեղ հայտարարությունը հրապարակվեց պատերազմի առաջին օրը, որտեղ համանախագահները կոչ էին անում «կողմերին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վերսկսել բանակցությունները՝ հակամարտության կայուն լուծում գտնելու համար»: Երկու օր անց՝ սեպտեմբերի 29-ին, Վիեննայում տեղի ունեցավ ԵԱՀԿ Մշտական խորհրդի հատուկ նիստ, որտեղ համանախագահ երկրների ներկայացուցիչները վերահաստատեցին նույն հայտարարությունը:

Հոկտեմբերի 1-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը ներկայացնող երեք երկրների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ կողմերին կոչ էին անում վերսկսել «բովանդակային բանակցությունները՝ բարեխղճորեն և առանց նախապայմանների»: Հոկտեմբերի 2-ին, ի լրումն իրենց նախորդ հայտարարությունների, համանախագահներն անհապաղ հումանիտար հրադադարի կոչ էին անում, որպեսզի հնարավոր լինի իրականացնել զոհվածների աճյունների փոխանակումը՝ ԵԱՀԿ-ի և ԿԽՄԿ-ի հետ համատեղ:

Հակամարտության համապարփակ կարգավորման տեսանկյունից հատկապես կարևոր էր նոյեմբերի 5-ի համատեղ հայտարարությունը, որտեղ ԵԱՀԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ, դեսպան Ջեյմս Ս. Գիլմոր III-ն ընդգծում էր, որ «միայն կողմերի համաձայնությունը, որը հիմնված կլինի ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների վրա, վերջ կդնի հակամարտությանը»: Թեև Մադրիդյան փաստաթուղթն ուղղակիորեն չէր հիշատակվում, սակայն դրանք այն երեք սկզբունքներն են, որոնք ընկած էին հակամարտության համապարփակ կարգավորման վերաբերյալ վերջին՝ Մադրիդյան փաստաթղթի հիմքում:

Նոյեմբերի 9-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ընդունեցին համատեղ հայտարարություն սեպտեմբերի 27-ից սկսած ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ: Նույն օրը ՀՀ արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց ունեցավ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի, Ֆրանսիայի ԱԳ նախարար Ժան-Իվ լը Դրիանի և ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանի հետ: Մնացականյանն ընդգծում էր, որ նոյեմբերի 9-ի հայտարարությունն «ուղղված է հրադադարի հաստատմանը և Արցախում խաղաղապահների տեղակայմանը և չի կարող համարվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համապարփակ հանգուցալուծում»: Արտգործնախարարը, որպես առաջնահերթություն, նշում էր Արցախի կարգավիճակը և

արցախահայության համապարփակ անվտանգության լիարժեք երաշխավորման անհրաժեշտությունը:

Նախընտրական քարոզարշավի ազդեցությունը Միացյալ Նահանգների դիրքորոշման վրա

Լեռնային Ղարաբաղի պատերազմը համընկավ Միացյալ Նահանգներում նախագահական ընտրությունների նախընտրական քարոզարշավի թեժ շրջանի հետ: Թրամփի սկզբնական լռության լույսի ներքո, Դեմոկրատական կուսակցության նրա մրցակից Բայդենը դրսևորում էր զգալի ակտիվություն Լեռնային Ղարաբաղի հարցի առնչությամբ: Մարտական գործողությունները սկսվելուց երկու օր անց Բայդենը հայտարարություն տարածեց, որտեղ նշում էր, որ Թրամփը պետք է անհապաղ կոչ անի Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին հաստատել հրադադարի ռեժիմ և պետք է դատապարտի Թուրքիայի միջամտությունը: Նա նաև վարչակազմին կոչ էր անում կիրառել «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածը, որն արգելում է Ադրբեջանին տրամադրել ուղիղ օգնություն, ներառյալ՝ ռազմական օգնությունը:

Ավելի ուշ՝ հոկտեմբերի 10-ի հրադադարի ռեժիմի խախտումից հետո, կրկին անդրադառնալով Թրամփի պասիվ դիրքորոշմանը, Բայդենը նշում էր, որ «Թրամփի վարչակազմը պետք է զգուշացնի Ադրբեջանին, որ չի հանդուրժի հակամարտության ռազմական լուծում պարտադրելու իր ջանքերը: Այն պետք է ցույց տա Հայաստանին, որ Լեռնային Ղարաբաղի շրջանները չեն կարող անվերջ օկուպացվել... Թուրքիայի կողմից Ադրբեջանին զենքի տրամադրումը և ռազմական լուծում քարոզող ռազմատենչ հռետորաբանությունն անպատասխանատվություն է: Դիվանագիտական լուծման հասնելը հեշտ չի լինի, սակայն Թրամփի վարչակազմը պարտավոր է փորձել... »: Հայտարարության մեջ նշվում էր նաև, որ «ո՛չ նախագահ Թրամփը, ո՛չ պետքարտուղար Պոմպեոն որևէ հեռախոսազրույց չեն ունեցել Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հետ՝ անկախ նրանից, որ տարածաշրջանն այրվում է կրակների մեջ: Դիվանագիտական նախաձեռնությունը Մոսկվային փոխանցելու փոխարեն վարչակազմը պետք է դրսևորի ավելի մեծ ներգրավվածություն՝ ամենաբարձր մակարդակներում ...»:

Ամերիկահայերի մի ստվար զանգված վրդովմունք հայտնեց Թրամփի վարչակազմի գործողությունների բացակայության առնչությամբ: Սակայն, պետք է նշել, որ թեև ամերիկահայերը զգալի քաղաքական ազդեցություն ունեն երկրի որոշ հատվածներում, նրանք առավելապես կենտրոնացած են այն տարածքներում, որոնցում երաշխավորված է դեմոկրատների հաղթանակն ընտրություններում,

ինչպես օրինակ՝ Կալիֆոռնիան, Մասաչուսեթսը և Նյու Յորքը: Հետևաբար, դա ազգային թեկնածուներին խնդրի առնչությամբ մտահոգվելու ավելի քիչ առիթ էր տալիս և էական ազդեցություն չունեցավ Թրամփի վարչակազմի որդեգրած դիրքորոշման վրա:

Այդուհանդերձ, պաշտոնական խոսույթի մակարդակում ամերիկահայերի դժգոհությունը որոշակի ազդեցություն ունեցավ գործող վարչակազմի դիրքորոշման ակտիվացման վրա: Դա արտահայտվեց հոկտեմբերի 25-ին Նյու Հեմփշիրում անցկացված նախընտրական քարոզարշավի ժամանակ, երբ Թրամփը խոստացավ լուծել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը. «Հայերը զարմանալի մարդիկ են, նրանք սաստիկ ուժով կռվում են, և դուք գիտեք, որ մենք պատրաստվում ենք ինչ-որ բան անել... Եվ խնդիրները, որ նրանք ունեն՝ մահերը, մարտերը և մնացածը... ամեն ինչ լավ է լինելու, ես դա անվանում եմ հեշտ դեպք: Գնացեք և ասեք սա ձեր ժողովրդին, հայե՛ր: Լուծումը հեշտ է, եթե գիտես՝ ինչ անել»:

Ռուսաստանի միջնորդությամբ երկու նախորդ հրադադարների ձախողումից հետո, Միացյալ Նահանգների միջնորդությամբ հրադադարը պետք է ուժի մեջ մտներ հոկտեմբերի 26-ին այն բանից հետո, երբ պետքարտուղար Պոմպեոն Վաշինգտոնում առանձին հանդիպումներ ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ: Դրան հաջորդեց նախագահ Թրամփի թվիթերյան գրառումը. «Շնորհավորում եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին, ովքեր հենց նոր համաձայնեցին հավատարիմ մնալ կեսգիշերին ուժի մեջ մտնող հրադադարին: Շատ կյանքեր կփրկվեն»:

Հետընտրական քաղաքականություն. «America First» դիվանագիտության աստիճանական անկումը

«Իրականությունն այն է, որ աշխարհը չի ինքնակազմակերպվում: Երբ մենք ներգրավված չենք, երբ մենք չենք առաջնորդում, ապա, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա հետևյալ երկու սցենարներից մեկը. կա՛մ այլ երկրներ կզբաղեցնեն մեր տեղը, սակայն ոչ այնպես, որ առաջ տանեն մեր շահերն ու արժեքները, կա՛մ, որ հավանաբար հավասարապես վատ է, ոչ մեկը չի զբաղեցնի այդ տեղը, և արդյունքում կստեղծվի քաոսային իրավիճակ»:

Պետքարտուղար Էնթոնի Բլինքենի վերոհիշյալ պնդումը լավագույնս պատկերում է Բայդենի վարչակազմի՝ «America First» դիվանագիտությունից շեղվելու նախնական վճռականությունը: Բայդենը երկար ժամանակ եղել է Վաշինգտոնի արտաքին քաղաքականության ամենակարկառուն դեմքերից մեկը և 1970-ական թվականներից սկսած՝ սերտ առնչություն ունի Հարավային Կովկասի

հետ: Բայդենը զբաղեցրել է փոխնախագահի պաշտոնը Բարաք Օբամայի օրոք և անձամբ է ճանաչում տարածաշրջանի առաջատար քաղաքական գործիչներից շատերին: Ենթադրվում էր, որ Բայդենի վարչակազմը կորդեգրի նոր տարածաշրջանային քաղաքականության ուղեգիծ՝ այն վերակողմնորոշելով դեպի ժողովրդավարություն և մարդու իրավունքներ: Բացի այդ, Բայդենի համար Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում ակտիվ ներգրավումը լավ հնարավորություն է վերանայելու իր հարաբերությունները Մոսկվայի հետ՝ հիմնված ընդհանուր շահերի վրա:

Ապրիլի 24-ին Բայդենը 1915 թվականին Թուրքիայի կողմից իրականացված մոտ մեկ միլիոն հայերի զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանումները ճանաչեց որպես Ցեղասպանություն: Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ տարածած մամուլի հաղորդագրության մեջ նախագահը շտկեց պատմական սխալը՝ հայերի դեմ կատարված հանցագործությունները Միացյալ Նահանգների նախկին նախագահների կողմից որպես ցեղասպանություն չճանաչելը, և ընդգծեց ցեղասպանության և զանգվածային ոճրագործությունների ապագա դեպքերը կանխելու ԱՄՆ հանձնառությունը: Մինչ այդ, 2019թ. վերջին ԱՄՆ Կոնգրեսն արդեն հստակ արտահայտել էր իր դիրքորոշումը: Ներկայացուցիչների պալատը և Սենատը հաջորդաբար միաձայն ընդունել են բանաձև, որը կոչ է անում «ոգեկոչել Հայոց ցեղասպանությունը» և «մերժել Միացյալ Նահանգների կառավարությունը հայերի ցեղասպանության ժխտման հետ ասոցացնելու փորձերը»: Բանաձևի տեքստը նախկինում մի քանի անգամ արգելափակվել էր Սենատում հանրապետական սենատորների կողմից, այդ թվում՝ այդ տարվա նոյեմբերին, Էրդողանի այցից անմիջապես հետո: Հետևաբար, անցյալի հետ կապի կտրուկ խզումը ցույց տվեց, որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները գտնվում են պատմական մինիմումի վրա:

Այդուհանդերձ, կարճ ժամանակ անց փորձ արվեց հավասարակշռել հակամարտող կողմերի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականությունը: Բայդենի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու որոշմանը հաջորդեց Կոնգրեսին ուղարկված ծանուցումն առ այն, որ Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենի վարչակազմը երկարացնում է «Ազատության աջակցության ակտի» 907-րդ բաժնի կասեցումը, ինչը նշանակում է, որ թույլատրվելու է ԱՄՆ ուղիղ օգնությունը (այդ թվում՝ ռազմական) Ադրբեջանին: Պետքարտուղար Էնթոնի Բլինկենը հավաստիացրել է, որ դա «որևէ կերպ չի խաթարի կամ խոչընդոտի Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների խաղաղ կարգավորման բանակցությունների ընթացքին կամ չի օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակներով»: Այդ որոշումն անմիջապես դատապարտեց

Միացյալ Նահանգների հայ համայնքը՝ որպես դավաճանություն, այն բանից հետո, երբ Բայդենը նախորդ ամիս ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ վերջին հարցազրույցներում վերահաստատվեց Բայդենի քաղաքականության նոր ուղեգիծը տարածաշրջանային հակամարտության նկատմամբ: Հետաքրքրական է, որ նույնիսկ նախընտրական քարոզարշավի ընթացքում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որևէ կերպ չի արծարծվել Բայդենի ելույթներում: ԱՄՆ դեսպանը Սյունիքում լրագրողների հետ զրույցում հայտնել է, որ Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի հետևանքները հաղթահարված չեն, իսկ հակամարտությունը կարգավորված չէ, քանի որ դեռևս լուծված չէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Հայաստանի Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ԱՄՆ դեսպանն ընդգծում էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի երեք հիմնական սկզբունքները, որոնք ընկած են Մադրիդյան փաստաթղթի հիմքում, մնում են արդիական և կիրառելի: Դեսպանը կարևորում էր Միացյալ Նահանգների այն համոզմունքը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դեռ պետք է կարգավորվի, իսկ Արցախի կարգավիճակի հարցում հստակություն լինի:

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ի տարբերություն նախորդ վարչակազմի, Բայդենը փորձում է ուժեղացնել Նահանգների ազդեցությունը տարածաշրջանում: Վերջին հայտարարությունները հստակ ուղերձ էին Միացյալ Նահանգներից, որ նոր վարչակազմն ավելի վճռական է տրամադրված Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը վերջնականապես կարգավորելու հարցում և հավատարիմ է հակամարտության կարգավորման գործընթացին՝ հիմնված «Մադրիդյան սկզբունքների» վրա, որոնց թվում է նաև *ժողովուրդների ինքնորոշման իրավունքը*: Սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության երեսնամյակի առթիվ Բայդենի շնորհավորական ուղերձում ընդգծվում էր երկկողմ հարաբերությունների կարևորությունը, վերջին տարվա ընթացքում հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերները և նշվում, որ Միացյալ Նահանգները «ձեռք ձեռքի տված կաշխատի Հայաստանի կառավարության հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի և այլ տարածաշրջանային ձևաչափերով՝ խթանելու տարածաշրջանային կայունությունն ու կարգավորելու հակամարտությունը»: Ուղերձում տարածաշրջանային այլ ձևաչափերի վերաբերյալ շեշտադրումը մտածելու առիթ է տալիս, որ ապագայում Միացալ Նահանգների դերը հակամարտության կարգավորման գործում միգուցե չի սահմանափակվի միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությամբ:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*